

ХV—ХVI ԴԴ. ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՄԵՂՎԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդվածում ներկայացվում են մեղվապահության մասին խրատ-խորհուրդներ միջնադարյան Հեռագրի բնագրերից:

Մեղվապահությունը հայերի հնագույն զբաղմունքներից է, որը հավաստվում է բազմազան վկայություններով, մասնավորապես, միջնադարյան գրավոր աղբյուրներով: Դրանց հեղինակներն, ըստ երևույթին, շատ տարիների սեփական փորձի հիման վրա, պորձնական ցուցում-խրատներ են տալիս մեղվի խնամքի վերաբերյալ: Այդ ցուցումների մեծ մասն իրենց կիրառական նշանակությունը պահպանել են մինչև մեր օրերը: Տրվում են նաև մի շարք հիվանդությունների բուժման դեղատոմսեր, որոնց մեծ մասի բաղադրության մեջ մեղրն ու մոմը գրավում են կարևոր տեղ: Ստորև խոսվում է նման Հեռագրերից երկուսի մասին:

Ջեռագրերից մեկը (№ 8185) XVI դարով թվագրվող ժողովածու է, որի մի բաժինը բժշկարան է, գրված միջնադարի նշանավոր բժիշկ Ալեքսիանոսի կողմից: Բժշկարանը բաղկացած է եղել 80 գլխից, որից 3-ը մեղ չի հասել: Հեղինակը բժշկարանի 73-րդ (Վասն լվի որ շար է քան զօջիլն») և 74-րդ (Վասն խաշանց ցաւի») գլուխների արանքում 84ա—91բ թերթերի 18 էջերի վրա գետեղել է «Վասն մեղուաց» վերնագրերը կրող հատվածը, որտեղ տալիս է 24 խորհուրդ-խրատ մեղվի խնամքի մասին:

Ջեռագրի անուղղակի տեղեկություններից կարելի է ենթադրել, որ Ալեքսիանոսը ապրել և գործել է Շամքորաձորի շրջանում, համեմայն դեպ, նա քաջ ծանոթ է եղել այդ վայրերին՝ Շամքորաձորով հոսող Չարեք գետին ու գետափին փոխած Գառնակեր գյուղին, շրջանի տեղանքին, բուսական ու կենդանական աշխարհին, ըստ երևույթին երկար տարիներ զբաղվել է մեղվապահությամբ, որը երևում է մեղվի խնամքի գործում նրա ունեցած հստակությունից, լավատեղյակ է եղել ժողովրդական բժշկությանն ու անասնաբուժությանը, պարապել է նաև կաշեգործությամբ և այդ բոլոր բնագավառներում իր կուտակած փորձն ու գիտելիքները խնամքով շարադրել է: Որպես հավաստումն այն ամենի իսկության, ինչ գրում է ինքը, շեշտում է, թե՛ «Ես մեղաւոր Ալեքսիանոսս աչօք տեսեալ եմ և արարեալ տէրն գիտակ է, որ սուտ չէ» [1, էջ 85ա]: Ա. Մ. Կոթողյանն այս առթիվ գրում է. «Ալեքսիանոսն այնպես է տիրապետել մեղվաբուծությանը, որ նրա խրատների մի մասը, որը պատկանում է ընդհանրապես մեղվի ընտանիքների խնամքին, պահպանվել է մինչև օրս և որոշ փոփոխություններով կիրառվում է մեր մեղվաւորներում... Արդի մեղվապահության հիմքում այդ խրատների մի մասը հարմարեցվել է շրջանակավոր փեթակների խնամքի պահանջներին» [2, էջ 18—20]: Նա բերում է Ալեքսիանոսի 24 խրատներից 9-ը և վկայակոչելով

ներսես Ակինյանին, որը Ալեքսիանոսի 24 խրատները աշխարհաբարի վերածելով հրապարակել է «Գյուղատնտեսական կյանք» ամսագրի 1926 թ. հունիսի համարում «Մեղվապահությունը հայերի մոտ» վերնագրով [3, էջ 46—50], Ալեքսիանոսի ձեռագիրը սխալմամբ համարում է «գրված, ըստ ամենայն հավանականության, 17-րդ դարի վերջում»:

Ալեքսիանոսն այնքան լավ է իմացել մեղվի վարքն ու բարքը, որ նկատել է, եթե մեղուն պարս (ձագ) է տալիս, իսկ մեղվապահը նպատակահարմար է դառնում այն առանձնացնել որսիս նոր ընտանիք, ապա պարսը կարելի է հանդիստ իջեցնել ձագախոտի օգնությամբ: Դրա համար անհրաժեշտ է ձագախոտը ճղմել, հոտը ուղղել տվյալ պարսի վրա ու այն պցել մի նոր փեթակում, որտեղ և կհավաքվի պարս տված նոր մեղվաընտանիքը, իսկ եթե պարսը սկսել է փախչել, ապա ձագախոտը պետք է պահել փախչող մեղունների բազմության մեջ, որի վրա էլ կիջնեն նրանք: Ալեքսիանոսը նկատում է, որ ձագախոտն ունի մի դարմանահրաշ հատկություն և վկայում, թե ոմանք ասում են նրա հոտը նման է պարսող մեղվի առաջնորդի (մեղվամայր—Ա. Գ.) հոտին, որի շնորհիվ էլ այդ հոտը գրավում է պարսին և այն իջնում է խոտի վրա: Նա միաժամանակ նշում է, որ այդ ձագախոտն աճում է Շամքոռաձորում և այդ խոտն ունենալ ցանկացողը վաղ գարնանը պետք է բահով այն հանի արմատից՝ հողը հետը, ու դնի իր պարտեզում [1, էջ 84ա—85բ]:

Այսպիսով, սխալված չենք լինի եթե եզրակացնենք, թե հարյուրամյակների առաջ հայ մեղվապահին հայտնի է եղել, որ մեղվաընտանիքի մեղունները իրենց մորը ճանաչել են հոտով:

Մեղվի խնամքին վերաբերող իր 24 խորհուրդները շարագրելուց առաջ Ալեքսիանոսը գրում է. «Եթե ուղում ես մեղու պահել, նրանք աճեն և շատանան այս ԻԴ (24) խրատներով պահի» [1, էջ 85բ] ու ապա տալիս իր խրատները:

Նախ՝ խորհուրդ է տալիս մեղվափեթակները գարնանը դնել տաք և քամիներից պաշտպանված արևոտ տեղ, որն ապահովված լինի այլևայլ վտանգներից: Նշում է մեղվանոցի շափսերը՝ լայնությունը, երկայնությունը, պատի բարձրությունը, մեղվափեթակների շափսերը՝ երկարությունն ու լայնությունը [1, էջ 85բ—86բ]: Խորհուրդ է տալիս փեթակները գործել ուռնու բարակ, նուրբ ու դալար ճյուղերով և ապա ծեփել [1, էջ 87ա]: Ինչպես նաև խորհուրդ է տալիս փեթակները դնել դետնից 40—45 սմ բարձր, ցցաշեն պատվանդանների վրա [1, էջ 87ա—87բ]: Մինչև այժմ էլ այս բարձրությունն է պահպանվում գետնի և փեթակի միջև, որպեսզի փեթակները չխոնավանան և խնամելը հեշտ լինի: Հանձնարարում է փեթակները ձմեռանոցից հանել այն ժամանակ, երբ շրջակայքի ձյունը հալվել է, ծառերը ծաղկել են և այլևս ցուրտ քամիներ չկան [1, էջ 87բ]: Հայտնի է, որ երեք հիմնական գործոնի տաք եղանակի, առատ նեկտարի և ծաղկափոշու համատեղ առկայության դեպքում է միայն մեղուն հարկադրում մեղվամորը՝ ավելացնելու ձվադրությունը, որով էլ կարճ ժամանակում մեծանում է մեղվազաղութը, իսկ դա առատ բերքի գրավականն է:

Ալեքսիանոսը նշում է նաև ամառային փարախում փեթակները դասավորելու կարգը [1, էջ 88ա], և խորհուրդ է տալիս փեթակները դուրս դնելուց երեք օր հետո, մի արևոտ ու տաք օր, բաց անել առջևի և ետևի միջնատախ-

տակաները (դեքարները) թեթև ծուխ տալ և փեթակը մաքրել մոմի մնացորդներից, բորբոսից, մեղվադիականներից, արկանոցը՝ ցեխից, ապա միջնատակտականները դնել իրենց տեղը և ծածկել շոր մամուռով, որ քամի շանցնի փեթակի ներսն ու մրսեցնի մեղուներին [1, էջ 88ա]: Սա ևս շատ անհրաժեշտ խորհուրդ է, քանի որ դրանով մեղվապահը զգալիորեն թեթևացնում է մեղվի գործը և նրան հնարավորություն տալիս անմիջապես անցնելու նեկտարի ու ծաղկափոշու հավաքմանը:

Տասներորդ և տասնմեկերորդ խրատները վերաբերում են մեղվանոցի մաքրությանը, ուր ասված է, որ փեթակները մաքրելուց հետո անհրաժեշտ է հեռացնել փեթակներից հանված կեղտը, որպեսզի այն զանազան հիվանդությունների պատճառ չդառնա:

Շատ արժեքավոր է 12-րդ խրատը: Այստեղ նշված է, որ փեթակները ձմեռանոցից հանելուց հետո նպատակահարմար է նեղացնել—խտացնել փեթակների բները՝ դեքարները մոտեցնել բնին, իսկ երբ մեղուն շատանա, դեքարները ետ քաշել, որ մեղուն հնարավորություն ունենա մեծացնելու բույնը: Դա կրկնել այնքան, մինչև դեքարները հասնեն փեթակի վերջը և այն լիքը լցվի [1, էջ 88բ]: Սա այն երևույթն է, որը ներկայումս անվանվում է բնի լայնացում կամ խտացում և, որը նպաստում է մեղվամոր ձվադրման շատանալուն, այսինքն՝ մեղվաընտանիքի աճին:

Այդպիսով, հեղինակը նրբանկատորեն դիտում է, որ աղքատ (թույլ) մեղվաընտանիքների դեքարները պետք է ուշ ետ քաշել, բույնը ուշ լայնացնել, որպեսզի նրանք կարողանան ուժեղանալ, ալլապես անհրաժեշտ ջերմություն չի պահպանվի, մեղվազաղութը ժամանակին չի աճի և ուժեղանա, ուստի և բերքը առատ չի լինի:

Մեղվապահը պարտավոր է հիշել, որ ամբողջ տարին տանից մեղրը չպետք է պակասեցնի որպեսզի անհրաժեշտության դեպքում կարողանա օգնել թույլ փեթակներին ու նորահաս ձագերին:

Այնուհետև, Ալեքսիանոսը մեղվապահի ուշադրությունը հրավիրում է այն բանի վրա, որ նա փեթակներից նոր ձագեր դուրս գալու ժամանակ զգույշ լինի, որպեսզի դրանց փախուստը կասեցվի ձագախոտի օգնությամբ [1, էջ 89ա]: Հաջորդ խրատով հանձնարարում է ուշադրի լինել մեղվամոր նկատմամբ, ծերացած մայրերը փոխարինել մատղաշներով, միացնել թույլ և անմայր փեթակները [1, էջ 89բ], ապա խորհուրդ է տալիս նոր վերցրած ձագին մայրափեթակից մոմահացքի տալ, մինչև ինքը սկսի մոմահաց գործել, ծուխ տալիս կրակի հետ զգույշ վարվել, որ փեթակը չվնասվի [1, էջ 90ա]: Երիտասարդներին (տղա, հարս կամ աղջիկ), որոնք դեռ հասու չեն մեղվապահությանը, խորհուրդ չի տալիս մեղր կտրել կամ փեթակ խնամել: Անհրաժեշտ է համարում միշտ թարմացնել փեթակների բները՝ սև մոմահացքեր փոխարինել սպիտակներով [1, էջ 90բ], որով կապահովվի լավորակ մեղրի ստացումն ու հիվանդությունների կասեցումը: Այսօր էլ մեղվանոցներում ամեն տարի մոմահացքի մեկ երրորդը թարմացվում է:

Քսանմեկերորդ խրատով ուսուցանում է մոմը մեղրից զատելու արվեստը:

Հաջորդ խրատը վերաբերում է մեղուների հիվանդություններին և դրանց դեմ պայքարի միջոցներին: Այսպես, եթե գարնանը կամ աշնանը որևէ մեղվափեթակ հիվանդանում է, այն անհապաղ պետք է վերացնել, որպեսզի հիվանդությունը չտարածվի մեղվանոցում:

Նախավերջին խրատը մեղունների աշնանային խնամքի մասին է: Աշնանը պետք է փեթակի վերջից հանել ավելորդ մոմահացները, դիքարը մոտեցնել բնին, որից հետո միայն տանել ձմեռանոց [1, էջ 90բ—91ա]:

Վերջին՝ քսանչորսերորդ խրատը նվիրված է ձմեռանոցին, որը պետք է ունենա հավասարակշռված ջերմություն, որպեսզի մեղուն ձմռանը անվրդով «քնի»: «Ճանճատունը թէ չլինի այսպէս, վնասն այս է. թէ տեղն խիստ տաք լինի ճանճն կու գոչա ամենեկին չի քնի, մեղրն կուտէ յետո սովամահ լինի, թէ խիստ է, նա մեռանի ի սաստիկ ցրտո: Թէ լոյսն ընկանի, ճանճն կու քամվի և փեթակն դատարկ կու մնա. թէ գեջ լինի առաջնորդը կու գողանա և մեղրն կու թթուի» [1, էջ 91ա—91բ]:

Բաղմամբորձ ու հմուտ մեղվապահ Ալեքսիանոսը հետևյալ խոսքերով է ավարտում մեղվապահությունը վերաբերող իր խրատ-խորհուրդները. «Ահա որդեակ իմ, մեղուաց թիմարն այս է, որ մի ըստ միոջէ գրեցի պարզ և յիստակ բանիւ, և այն որ մնաց, իմաստուն մարդո հարց և ուսիր, զմեղաւոր Ալէքսիանոսս յիշեա ի տէր» [1, էջ 91բ]:

Այս ամենից բացի, Ալեքսիանոսը հանդես է գալիս նաև որպես դեղագործ-բժիշկ, տալով բազմաթիվ և բազմազան հիվանդությունների դեղատոմսեր մեծ մասամբ մեղվի և մոմի պարունակությամբ:

Գրեթե նույն ժամանակաշրջանին է պատկանում «խրատ մեղւի» խորագրով մի այլ ձեռագիր (ընդօրինակված է Մատենադարանի № 2154 ձեռագիր մատյանի մեջ*, որն առաջին անգամ է ներկայացվում ընթերցողների ուշադրությանը):

Այստեղ կարևորն այն է, որ անհայտ գրիչը, Ալեքսիանոսի նման, հմուտ լինելով մեղվապահական գործում, մեղվի խնամքի խնդրում հանդես է գալիս ուրույն խրատ-խորհուրդներով, որոնք արժանի են առանձին ուշադրություն:

Նրա առաջին խրատը վերաբերում է մեղունների գարնանային խնամքին՝ սկսած փեթակները ձմեռանոցից հանելու և բացօթյա տեղադրելու օրից: Այսպես. «Ծրբ ձունն ցամաքի և ջեր լինի և գարուն. զփեթակն ի դուրս դիր. նրանց տեղ որ քամի խիստ շառնու Ա (1) կարգ քար շարէ ի ներքեն շանկանի, ուփնմանը եւ կարգ մի խոտ դիր և կարգ մի փեթակ. ի վերջէն ջրով ծածկէ տաք կենալն լաւ է» [4, էջ 6բ]: Ապա անդրադառնում է ձմռանը մեղվափեթակները պահելու կարգին. «Ձմեռն ի տաք տեղ դիր, որ ջուրն չի սառի՝ յարեգակին բաց դիր. Ա (1) տամ, թէ մեղր սակաւ լինի, մեղր դիր ի ներս. կամ չամիչ և ձեթ ծեծէ և ջրով տրորէ՝ և զշանչքն յիստակէ և ամանով ի փեթակն դիր, որ ուտին և զօրանան. կամ ըռուպ կամ մեղրաջուր դնես, բայց յերես ջրին ցախ դիր որ մեղուքն ի ջուրն ի ներս շանկանին և խեղդին» [4, էջ 6բ]: Գրիչը խորհուրդ է տալիս նաև մեղվափեթակների հետ աշխատելիս շաքարը մեկ անգամ ծուխ տալ մեղուններին, քանի որ, ըստ նրա, ծուխն այնքան է անհրաժեշտ մեղվին, որքան աղը՝ ոչխարին: «Շաքարն անկամ մի ծուխ տուր, ոչխարին աղն է շահ և փեթակին ծուխն» [4, էջ 7ա]: Սակայն նախազգուշացնում է, որ թուխսը

* Տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան: ձեռ. № 2154, էջ 6բ—7ա: Այս ժողովածուն թվագրված է XV դարով, թեև այն արտագրվել է տվելի վաղ ձեռագրերից, գրչի անունը չի պահպանվել՝ քերված, հանված է: Զեռագրի մեջ հետադաշում մտել է նաև «խրատ մեղւի» խորագրից կրող երկէջանոց հատվածը, որը մասնագետները, ելնելով ձեռագրական հատկանիշներից, թվագրում են XVI դարով:

շատ լինելու դեպքում, այսինքն՝ որդ ու ձվի ուժեղ աճի ժամանակ շատ ծուխ տալ պետք է: Խոստում է նաև ձագ տալու նշանների և ձագը վերցնելու եղանակների մասին. «Եւ ծուխ տուր յամէն, Ը (Տ) օր. երբ թուխս լինի շատ ծուխ մի տար: Երբ ուռի ձագն շատանայ և ծաղկի երեսն դեղին տայ. Գ (Յ) օր էլ ձագ տայ, մաւտ կաց երբ ձագն ելանէ շուտ առնուս, մեկ տամ կու կենայ թռչի և գնայ» [4, էջ 6բ]:

Սա ևս Ալեքսիանոսի նման նշում է մեղունների պարս տալու ժամանակ ձագախոտը որպես մեղու հավաքող բույս օգտագործելու անհրաժեշտության մասին: Այսպես. «Խոտ մի կայ ձագախոտ ասեն, զայն առ և զփեթկին մէջն քսէ կամ մեղրաշուր, երբ զձագն ի ներս դնես, զբերան փեթկին շալով կալու զբերանն ի գետին դիր և զողքն ի վեր, որ ի ծակն ժողովին» [4, էջ 6բ—7ա]: Իսկ ձագ վերցնելուց հետո, խորհուրդ է տալիս մեղրաշուր փշել փեթակի ներսը և վերջինիս բերանը առժամանակ շալով կապել:

Անհայտ գրիչը հուշում է մի կարևոր խորհուրդ ևս, որը չի հանդիպում որևէ այլ գրավոր աղբյուրում, բայց որը ժողովրդի մեջ պահպանվել և կիրառվում է մինչև օրս: Դա արհեստականորեն ձագ վերցնելիս մայր և դուստր փեթակների աշխատավոր մեղունների ուժերի հավասարակշռումն է, որը կատարվում է փեթակների տեղերը փոխելու միջոցով [4, էջ 7ա]: Նա խոստում է նաև մայրապտկի (մերաբոժոժ) մասին, որը նմանեցնում է ոչխարի պտկի, միաժամանակ զգուշացնելով, որ մայրապտկները կտրելու դեպքում փեթակը ձագ չի տա, քանի որ զրկված կլինի նոր մայր ունենալու հնարավորությունից: Այս դեպքում մեղուն ստիպված կլինի նոր մայր հանելու, որպեսզի որր չմնա:

Հաջորդ կետում անհայտ գրիչը նշում է մեղվի բույնը լայնացնելու անհրաժեշտության մասին, որպեսզի մեղուն չխեղդվի. «Երբ փեթակն լցւի ի յօրէ յօր լինի ձագ աւալն, յեթքն, Բ (2) տեղ թող, որ չխեղդին» [4, էջ 7ա]:

Նորելուկ մեղվաձագերը թույլ լինելու դեպքում առաջարկում է փեթակներից մեկի մայրը հանել, երկուսի վրա էլ մեղրաշուր ցանել, որպեսզի երկու փեթակների մեղուններն էլ համախմբվեն մի տեղ: Դա նա համեմատում է մերժված հորթը կովին սովորեցնելու երևույթի հետ, որն արվում է հորթի վրա աղ ցանելու և կովին այն լիզել տալու միջոցով: Այսպես. «Երբ ձագն քիչ լինի Բ (2) ձագին. Ա (1) մէր թող, ի վերայ միմեանք ձգէ: Եւ թէ ձագն քիչ մի ծաղէ արար էր, քասա մի կամ սակ մի մեղրոտ արայ, ի վերայ ծակին դիր, որ մեղուքն ելանեն ի փեթկէն ի քարղան լցւին. և յեթքէն ծուխ տուր: Եւ զմիւս ձագն, որ առնուս, ի յետքէն ի ներս լից. բայց յառաջ մեղրաշուր փշէ ի փեթակն, և ի վերայ յետին ձագին, որ առաջինք զան և զյետինքն լիզեն, որպէս կով զհորթն և միաբանին» [4, էջ 7ա]:

Վերջապես, մեղվին խիստ վնաս պատճառող ցեցը փեթակից վերացնելու նպատակով առաջարկում է քացախ փշել փեթակի մեջ. «Եւ յորժամ ցեց անկանի ի փեթակն, Բ (2) կում քացախ առ ի բերան և ի նեւ փշէ» [4, էջ 7ա]:

Այսպիսով, տակավին խոր միջնադարում հայ իրականության մեջ, երբ խոսք անգամ լինել չէր կարող գիտական փորձակայանների գոյության մասին, Ալեքսիանոսը և անհայտ գրիչը բավական հաստատուն գիտելիքներ են ունեցել մեղվապահության վերաբերյալ, որոնց վրա էլ խաթարվում են նրանց խրատ-խորհուրդները: Այդ գիտելիքներն արգասիք են ժողովրդական դարավոր հմտությունների իմացության, ժամանակի համապատասխան գրավոր

աղբյուրների քաջատեղյակության և, որ ամենակարևորն է, իրենց փորձով ձեռք բերված գիտելիքների համադրման: Դրանով իսկ վերը քննված ձեռագիր պատահիկները մեր օրերում ստանում են բացառիկ պատմագրական ու ճանաչողական արժեք, որոշ իմաստով նաև կիրառական նշանակություն:

Հայկական ՍՍՀ ԳԱ հնագիտության և
ազգագրության ինստիտուտ

Ստացված է 10.XI.1976

А. О. ГАСПАРЯН

БИБЛИОГРАФИЧЕСКИЕ СВЕДЕНИЯ XV—XVI вв. ПО ПЧЕЛОВОДСТВУ

Резюме

В статье говорится о двух рукописях из Матенадарана им. Маштоца, содержащих полезные советы по пчеловодству. Авторы рукописей, опираясь на многолетний опыт, делают важные указания по уходу за пчелами, часть которых сохранила свое значение по сегодняшний день.

Автором рукописи № 8185 является Алексанос из села Гарнакер Шамкорадзора.

Другой отрывок под названием «Советы пчеле», помещенный в рукописи № 2154, исследуется впервые и принадлежит неизвестному автору.

Рукописи относятся почти к одному периоду.

Армянские писцы еще в глубоком средневековье обладали богатыми знаниями о пчеловодстве, которые являлись результатом векового народного опыта, глубокого знания письменных источников своего времени и самое главное—результатом знаний, приобретенных на личном опыте.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 8185:
2. Կերպյան Ա. Մ., Վարդանյան Հ. Հ., Թումանյան Ջ. Ի. Մեղվաբուծություն, Երևան, 1961:
3. Ալիևյան Հ. Ն. Մեղվապահությունը հայերի մոտ, «Գյուղատնտեսական կյանք», 6, Երևան, 1926:
4. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 2154: